

**ՉԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ
ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

ՈՐՈՇՈՒՄ

«.....» 2017թ. թիվ

**ՉԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ
ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
2-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետը, Չինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Չինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի՝ «Չինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հատուցման գումարների վճարման կարգը հաստատելու վերաբերյալ» որոշմամբ հաստատված՝ Հատուցման գումարների վճարման կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Կարգի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3.Հատուցման գումարը փոխանցելու մասին որոշումը կայացնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան համապատասխան պետական մարմնից զինծառայողի, ինչպես նաև շահառուի (շահառուների) վերաբերյալ Օրենքով սահմանված փաստաթղթերը (տեղեկությունները) ստանալու 3-րդ օրը՝

1) Հիմնադրամը Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված միանվագ գումարը փոխանցում է շահառու(ներ)ի համար բացված բանկային հաշվին.

2) կատարում է Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված հավասարաչափ վճարումներից և Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված վճարման ենթակա գումարներից առաջին վճարումը՝ հաշվի առնելով նաև սույն կարգի 3.1. կետի դրույթները:

2) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` 3.1. կետով.

3.1. Եթե հատուցման գումարն ենթակա է վճարման այն հիմքով, որ տվյալ Չինձառայողը ճանաչվել է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ապա այդ զինձառայողին` որպես սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված առաջին վճարում, վճարվում է իրավասու մարմնի` ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից այդ զինձառայողին հաշմանդամ ճանաչելու մասին որոշումն ընդունելու օրվանից մինչև Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների կառավարման մարմնի կողմից հատուցման գումարը փոխանցելու մասին որոշում կայացնելու օրն ընկած ժամանակահատվածի բոլոր ամիսների համար հավասարաչափ վճարումների ամբողջ գումարը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**Չինձառայողների կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասների հատուցման
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ`**

Վիգեն Սարգսյան